ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՃՈՐՏԱԿԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Սովետական պատմաբանները ճորտատիրություն հասկանում են երկու կերպ. ոմանք այն ըմբռնում են որպես գյուղացիության ֆեոդալական ամեն մի կախվածություն՝ սկսած ֆեոդալական հարաբերությունների նախնական ձևերից, վերջացրած նրանց ավարտուն ձևերով։ Մյուսները ճորտատիրության տակ հասկանում են ֆեոդալական հարաբերությունների միայն ավարտուն և ամենածանր ձևը։ Վերջիններս այս ձևի բնորոշ հատկանիշներն են համարում գյուղացիների ամրակցումը հողին, ազատ տեղաշարժի իրավունքի արգելակումը և գյուղացու նկատմամբ կալվածատիրոջ՝ իրավաբանորեն ձևակերպված անձնական ու վարչա-դատական իրավունքներ ունենալը։

Մեր կարծիքով, ճորտատիրության այդ երկրորդ ըմբռնումն ավելի ճիշտ է։ Ֆ. Էնգելսը, խոսելով միջնադարյան Գերմանիայի գյուղացիության մասին, ֆեոդալական կախյալ գյուղացիներին տարբերում էր ճորտերից։ Նա գրում էր. «Գյուղացու վրա էր ծանրանում հասարակության շերտերի ամբողջ կառուցվածքը — իշխանները, պաշտոնյաները, ազնվականությունը, քահանաները, պատրիկները և քաղաքացիները։ Արդյոք նա կպատկաներ որևէ իշխանի, թե կայսերահպատակ որևէ ազատ ասպետի, որևէ եպիսկոպոսի, թե վանքի, կամ որևէ քաղաքի, դա միևնույն է,— ամենուրեք նրա հետ վարվում էին իբրև մի առարկայի հետ, իբրև մի բեռնատար կենդանու հետ և նույնիսկ ավելի վատթար ձևով։ Եթե նա ճորտ էր, լիովին կախված էր իր տիրոջ ողորմածությունից կամ տհաճությունից։ Եթե սոսկ հպատակ գյուղացի էր, հապա նրան ճնշելու համար արդեն բավական էին օրենքով և պայմանագրերով սահմանված պարտականությունները, որոնք օրըստօրե ավելանում էին»[1]։

---

[1] Ֆ. Էնգելս, Գերմանական գյուղացիական պատերազմը, Երևան, 1934, էջ [illegible] Դժբախտաբար, այս քաղվածքի հայերեն թարգմանությունն անհաջող է։ Կախյալ գյուղացին թարգմանված է հպատակ, իսկ վերջին մասում որոշ բառեր ուղղակի բաց են թողնված, որի հետևանքով միտքը տուժել է։ Մեր կարծիքով, ավելի կատարյալ է ռուսական թարգմանությունը, որը հարկ ենք համարում բերել։ «На крестьянина ложилась своей тяжестью вся общественная пирамида: князья, чиновники, дворянство, попы, патриции и бюргеры. Принадлежал ли он князю, имперскому барону, епископу, монастырю или городу—с ним всюду обращались как с вещью или вьючным животным, или же еще того хуже. Если он был крепостным, он находился всецело во власти своего господина; если же он был зависимым, то уже одних законных, установленных по договору повинностей было вполне достаточно, чтобы его придавить, а эти повинности увеличивались с каждым днем» (К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 7, էջ 356)։

Վ. Ի. Լենինը, ճորտատիրական տնտեսության մասին խոսելիս, նույնպես մատնանշում էր գյուղացիության ֆեոդալական կախվածության տարբերակները։ Նա գրում էր. «Եթե կալվածատերն անմիջական իշխանություն չունենար գյուղացու անձի վրա, ապա նա չէր կարող հարկադրել իրեն համար աշխատելու այն մարդուն, որը հողաբաժին ունի և սեփական տնտեսություն է վարում։ Հետևաբար անհրաժեշտ է «արտատնտեսական հարկադրանք», ինչպես ասում է Մարքսն այս տնտեսական ռեժիմը բնորոշելիս... Այս հարկադրանքի ձևերն ու աստիճանները կարող են շատ ու շատ տարբեր լինել, ճորտային կացությունից սկսած և գյուղացու դասային անիրավահավասարությամբ վերջացրած»[2]։

Վ. Ի. Լենինը մի այլ առիթով տալիս էր ճորտի հետևյալ բնութագրումը. «Ճորտատիրական իրավունքի հիմնական հատկանիշը,— գրում էր նա,— այն է, որ գյուղացիությունը... համարվում էր հողին ամրացված...»[3]։

Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի ճորտատիրության մասին խոսել են ինչպես բուրժուական, նույնպես և մարքսիստ պատմաբանները։ Այսպես, Լեոն գրում էր. «Մի շատ սխալ կարծիք կա տարածված, թե Թուրքիայում... ճորտություն գոյություն չի ունեցել... Թուրքիան, ժառանգելով Բյուզանդիայից նրա քաղաքական և տնտեսական հիմնարկությունները, յուրացրել է և ճորտությունը՝ իբրև մեկն այդ հիմնարկներից... Հայ գյուղացիությունը, բացառապես, բուրդ ազնվականության ճորտն էր»[4]։ Սակայն Լեոն բացի ճորտատիրությունից գյուղացիության ֆեոդալական կախվածության ուրիշ ձև չէր նշում։

Մ. Ներսիսյանը, ուսումնասիրելով արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները, կանգ առավ գյուղացիների սոցիալական-տնտեսական դրության վրա և ցույց տվեց, որ նրանց մի մասը եղել է ֆեոդալական կախումից ազատ, իսկ մյուսը գտնվել է կախյալ և ճորտական վիճակում։ Նա նշում է. «Արևմտահայ գյուղացու ճորտական վիճակը շարունակվեց 1890-ական թվականներին և ավելի ուշ՝ XX դարի սկզբին»[5]։

Ճորտատիրությունը Թուրքիայում առաջացել էր և ստացել իրավաբանական ձևակերպում տակավին միջնադարում։ Այսպես. սուլթան Սուլեյմանի կանոններից մեկում ասվում էր. «Թիմարից փախած ռայաթներին հավաքելը օրենք է։ Սակայն չտարածել այդ նրանց վրա, որոնք ավելի քան 15 տարի ապրում են որևէ տեղում»։

Թուրքական կառավարության այդ օրենքը տարածվում էր նաև Արևմտյան Հայաստանի վրա։ Ա. Սաֆրաստյանի և Մ. Զուլալյանի կողմից վերջերս հրատարակած օսմանյան օրենքների ժողովածուում Էրզրումի վիլայեթի ռայաթների մասին կարդում ենք. «Եթե ռայաթը, իր ձեռքում հող ունենալով հանդերձ, փախչի, սիփահին օրենքով իրավունք ունի նրան իր տեղը վերադարձնելու։ Սակայն տաս տարուց ավելի մի տեղում բնակվողին նոր բերելն արգելվում է»[7]։

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 224—225։

3 Նույն տեղում, հատ. 29, էջ 592։

4 Լեո, Թուրքահայ հեղափոխության դաղափարաբանությունը, Փարիզ, 1934, հատ. Ա, էջ 38։

5 Ս. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ, Երևան, 1955, էջ 51։

6 „Аграрный строй Османской империи XV—XVII вв.". документы и материалы, М., 1963. էջ 33։

7 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI—XVII դդ. կանոնագիրներ)», Երևան, 1964, էջ 22։

Ուշագրավ է, որ թուրքական օրենքները արգելում էին ոչ միայն թուրք, հայ, այլ նաև քուրդ գյուղացիների տեղափոխումները։ Նույն ժողովածուում նշվում էր, որ եթե քրդական «ցեղից դրանցված մարդիկ ցանկանան գնալ ուրիշ տեղ, սիփահին համաձայն դաֆթարի արգելելու [իրավունք ունի]»[8]։

Սակայն Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում ճորտատիրությունն ուներ իր առանձնահատկությունները։ Ի տարբերություն եվրոպական մի շարք երկրների, որտեղ ճորտերը ամրացված էին կալվածատիրոջ անձնավորությանը, այստեղ նրանք ամրացված էին տվյալ շրջանին կամ գյուղին։ Այդ առանձնահատկությունը բխում էր մի կողմից ֆեոդալական հողատիրության ռազմալենային բնույթից, իսկ մյուս կողմից՝ շարիաթի սկզբունքներից։ Ռազմալենային հողատիրության ժամանակ կալվածատերն իրավաբանորեն ցմահ էր տիրում տվյալ շրջանին կամ գյուղին, որի հետևանքով ճորտերը չէին կարող դրանցվել նրա անունով, իսկ շարիաթը արգելում էր անձնական կախվածությունը։

XIX դարի 30—40-ական թվականներին Թուրքիայում և Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում ռազմա-լենային հողատիրությունը փոխարինվեց կալվածատիրական հողատիրությամբ, բնաջնջվեցին շատ դերբեյներ, որի հետևանքով զգալի չափով աճեց ազատ գյուղացիների թիվը։ Սակայն դերբեյությունն ու ճորտատիրությունը վերացան։ Դ. Թեյլորը 1860-ական թթ. արձանագրում էր, որ Դիարբեքիրի վիլայեթում քրիստոնյաները՝ հայերն ու ասորիները, իրենց քուրդ տերերի կողմից անվանվում են «գար-գուլի», այսինքն՝ «գեղինով, ոսկով գնված», «որը միանգամայն ճիշտ է», քանի որ «քրդերն այդ մարդկանց գնում ու վաճառում են որպես ոչխար կամ որևէ այլ անասուն»[9]։

Դ. Թեյլորն անդրադառնում էր քրիստոնյաների ճորտացման պատմությանը և ցույց էր տալիս, որ սկզբում նրանք քրդական ցեղապետերին արաբիաս հարկի պես դրամական հարկ էին վճարում, որպեսզի սրանք պաշտպանեին իրենց անձն ու գույքը, բայց հետագայում, օգտվելով քրիստոնյաների աղքատությունից ու թշվառությունից, ուժեղացրին իրենց իշխանությունը նրանց նկատմամբ և դրեցին կապալային վիճակի մեջ։ Նա գրում էր, թե «այժմ նրանց (այսինքն՝ քրիստոնյաների — Ա. Հ.) գրությունը ներկայացնում է հետևյալ պատկերը. նրանք ձեռքից-ձեռք են անցնում ամբողջ համայնքներով՝ իրենց մշակելի հողերի հետ միասին, բայց չեն կարող վաճառվել առանձին-առանձին»[10]։

Բաֆֆին, 1850—1870-ական թթ. շրջագայելով Արևմտյան Հայաստանում, նշում էր, որ թուրք և քուրդ դերբեյները բռնությամբ հափշտակել են հայ գյուղացիների հողերը, որի հետևանքով «հայը դարձել է դերբեկի կամ յուր սոր աղայի ձեռքում նուրտ»[11]։

Արևմտյան Հայաստանում գյուղացիության ճորտական կախվածությունն ավելի ուժեղացավ և ընդունեց նամենատարբեր լայն տարածում 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո։ Դրան մեծապես նպաստեց մի կողմից սուլթան Աբդուլ-Համիդի ազգային բաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ ապրանքա-դրամական հարաբերությունների թույլ զարգացումը։

---

8 Նույն տեղում, էջ 30։

9 Д. Тейлор. Путешествие по Курдистану. Тифлис, 1873, էջ 76։

10 Նույն տեղում, էջ 77։

11 Բաֆֆի. Երկեր, հատ. 9, էջ 251։

Սուլթանը հայ ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարելու նպատակով պատերազմից հետո սկսեց ամրապնդել Արևմտյան Հայաստանում իր հենարանը՝ ֆեոդալների դասակարգը։ Նա այդ բանը կատարեց դանդաղ ճանապարհներով, որոնցից ամենագլխավորը համիդիական գնդերի կազմակերպումն էր։ Աբդուլ-Համիդն այդ գնդերի մեջ մտած քրդական ցեղապետերին տալով փաշա, միրալա և այլ տիտղոսներ, օժտեց նրանց մի շարք արտոնություններով, վարչա-քաղաքական ֆունկցիաներով և բարձրացրեց նրանց ազդեցությունը իրենց ցեղակիցների ու հպատակ գյուղացիների մեջ։ Կարինի ռուսական հյուպատոս Ա. Մ. Պրժևալսկին նշում էր, որ ամեն մի գանգատ կամ բողոք համիդիական գնդերում մտած ցեղապետերի դեմ կառավարության կողմից «դիտվում էր որպես փադիշահի անձի վիրավորում կամ IV կորպուսի մուշիր Զաբբիփաշայի դեմ ուղղված բանսարկության արդյունք»[13]։

Աբդուլ-Համիդը, մյուս կողմից, սկսեց արգելակել հայ գյուղացիների տեղաշարժն ու արտագաղթը։ Դեռ 1879 թ. նա առաջարկեց Կ. Պոլսի հայոց պատրիարքին. «խրատել հայ բնակիչները հարստահարությանց պատճառով հայրենիքնին թողլու նպատակեն հետ կեցնելու»[14]։

Ապա սուլթանը հանձնարարեց վիլայեթների ու սանջակների կառավարիչներին հետևել հայերին և կանխել նրանց արտագաղթը։ 1888 թ. մի հաղորդման մեջ ասվում էր. «Ը. դուռը նորեն խիստ հրահանգներ ղրկած է գավառական իշխանություններին, որ չթուլատրեն հայերին Ամերիկա երթալ»[15]։

Սուլթանը կարգադրեց արգելել հայերի տեղափոխումները գյուղից քաղաք, սանջակից սանջակ և անգամ գյուղից գյուղ։ Եվ նահանգական ու գավառական իշխանությունները համարյա ամենուրեք իրագործում էին սուլթանի այդ կարգադրությունը։ 1901 թ. ականատեսներից մեկը Սղերդից գրում էր. որ հայերին «Պոլիս կամ նույնիսկ ուրիշ նահանգներ ճամբորդել իսպառ արգելված է, անցագիր բնավ չեն տար»[16]։ Իսկ 1904 թ. Դեղուշկան (Ա. Դարբինյանը) նշում էր, որ Վանում «տեղական իշխանությունը աշխատում է քաղաքում թափառող... գաղթականներին վերադարձնել իրենց ծննդավայրերը»[17]։

Խարբերդի դաշտի հայ գյուղացիները 1902 թ. վարձում են մահմեդական վելեդ և դաղտնի կերպով ուզում են փախչել արտասահման։ Սակայն տեղական իշխանությունները, նկատելով նրանց փախուստը, ետ են վերադարձնում։ Ականատեսներից մեկն այդ առթիվ գրում էր. «Անցած շաբթուն ոստիկանություն լուր առած բլլալով, թե Խանգեղցի ծանոթ թուրք ջորեպան մը նորեն փախստականներ կտանե՝ փութով հեծելագորքեր ու փոլիս-գոմիսեր մը ղրկեց Մալաթիայեն անդին, ուրկե 40 գյուղացիներ ձերբակալելով ետ դարձուցին։ Տեսնելու էր այն ողբալի, այն վերին աստիճանի թշվառություն, որ կծածկեր դանոնք, և այն հուսահատություն, որ դրոշմված էր անոնց դեմքերուն վրա»[17]։

Աբդուլ-Համիդի այդ քաղաքականությունը, ինչպես ասվեց, ուղղված էր ամենից առաջ հայ ազգային-ազատագրական շարժման դեմ։ Բայց այն միաժամանակ նպաստում էր ֆեոդալական հարաբերությունների ամրապնդմանն։

---

13 А. М. Пржевальский, Вилайет Эрзерум. Тифлис, 1904, ч. 1, էջ 50։

14 Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, Կ. Պոլիս, 1879, մաս Բ, էջ Իէ։

14 «Մշակ», 1888, № 129։

15 «Դրոշակ», 1901, № 7, էջ 119։

16 «Մուրճ», 1904, № 4, էջ 27։

17 «Դրոշակ», 1902, № 9, էջ 137։

ու զարգացմանը, աշխատավոր գյուղացիությանը դնում էր ճորտատիրական վիճակի մեջ։ Վ. Ի. Լենինը «Գյուղական չքավորությանը» աշխատության մեջ քննադատելով Ռուսաստանի ինքնակալական կարգերը, գրում էր. «Ռուս մուժիկը դեռ այնքան է ստրկացած աստիճանավորներին, որ չի կարող ազատորեն քաղաք տեղափոխվել, չի կարող ազատորեն հեռանալ ու բնակվել նոր հողերի վրա։ Մինիստրը հրահանգում է, որ նահանգապետները թույլ չտան հեմեռնագլուխ վերաբնակություններ... Մուժիկը... առանց իշխանավորի տեղից շարժվել անգամ չի համարձակվի։ Մի՞թե սա ճորտական կախում չէ (ընդգծումը մերն է — Ա. Հ.)»[18]։ Վ. Ի. Լենինի այս խոսքերն առավել չափով կարելի է վերագրել նաև թուրքական բռնապետական կարգերին։

Արդուլ-Համիդի վարած ազգային ու ագրարային քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում աղաները ու բեյերը լայն չափերով սկսեցին բռնագրավել գյուղացիական հողերը։ Ըստ մեր ձեռքի տակ եղած ոչ լրիվ տվյալների, նրանք հայկական վեց վիլայեթներում բռնագրավեցին 1.030.300 օրավար կամ 74.600 հեկտար վարելահող[19]։

Աղաները ու բեյերը չբավարարվեցին միայն գյուղացիների հողերի բռնագրավումներով։ Կառավարության թողտվությամբ նրանք տարածեցին իրենց իշխանությունը նաև բազմաթիվ գյուղացիների վրա, դարձնելով նրանց կախյալներ ու ճորտեր։ Մի կողմ թողնելով կախյալ գյուղացիներին, որոնց գրության ուսումնասիրումը դուրս է սույն հոդվածի նպատակներից, բնութագրենք ճորտ գյուղացիների վիճակը XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին, հաշվի առնելով վերևում սովետական մասնագետների կողմից ճորտությանը տված հատկանիշները։

Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում աղաները ու բեյերը արգելակում էին իրենց իշխանության տակ գտնվող գյուղացիների ազատ տեղափոխումները։ Մեր ձեռքի տակ կան այդ մասին բազմաթիվ նյութեր։ Բերենք դրանցից մի քանիսը։

1902 թ. մայիսին Բուլանրխի կազայի Խանոզլի գյուղի հայերը, չտանելով Բրգախ աղայի ճնշումները, ստիպված են լինում «թողնել տուն ու տեղ, հող ու ջուր և հեռանալ. այդ պարագային Բրգախ աղան դիմելով Մանազկերտի բերդը, կառավարությանը կրողոքեն հայերու դեմ, «հայերը հատուկ դիտումով կհեռանան, և յուրաքանչյուրի վրա մեծ առնելիքներ ունիմ, ետ վերադարձուցեք» կոսկ, ո՞ր կառավարական պաշտոնյան կհամարձակի աղայի խոսքին ու կամքին հակառակ բան մը արտասանել։ Խանոզլի գյուղացոց բոլոր բողոքները անլսելի կմնան, ծեծի ու սպառնալյաց ներքև ետ կվերադառնան»[20]։

Նույն թվին Վանի սանջակի Սևան գյուղի հայերը, չցանկանալով այլևս տանել Միրզա աղայի հարստահարումները ու բռնությունները, փորձում են գիշերով փախչել։ Սակայն աղայի զինակիցները ստիպում են նրանց ետ վերադառնալ[21]։

1903 թ. Սասունի Պերմ գյուղի բնակիչները, հարստահարվելով ու կեղեքվելով Քեռոր Սրլոյի կողմից, անհնարին են համարում այլևս մնալ իրենց տե-

18 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 6, էջ 506։
19 «Ազատամարտ», 1911, № 489։
20 «Դրոշակ», 1902, № 7, էջ 103։
21 Նույն տեղում, № 9, էջ 136։

գում, և «կ՚որոշեն գաղթել տնով, տեղով։ Ագան իմանալով պերմյոց այս խորհուրդը, անմիջապես քրդերը կլեցնեն գյուղը, կպաշարեն, ճամփաները կփակեն և չի թողուր, որ հեռանան»[22]։

Կ. Երևանյանը պատմում է, որ Զարսանջակի Վասկերտ գյուղի բնակիչները, թվով ավելի քան 110 ընտանիք, չտանելով աղայի հարստահարումները, որոշում են մասսայաբար գաղթել Բերրի։ Բայց գիտենալով, որ աղան թույլ չի տա, նրան հայտնում են, թե տանում են իրենց ամանեղենները վաճառելու։ Երբ տեղ են հասնում, հրաժարվում են ետ վերադառնալ և դիմում են հայոց հոգևոր առաջնորդին՝ խնդրելով վերցնել իրենց իր պաշտպանության տակ։ Այնուամենայնիվ, «Վասկերտի աղան, երեք տարի ետք, Բերրի կուգա և կհաջողի 12 տուն համոզել և Վասկերտ վերադարձնել»[23]։

Ենթադրել է, որ աղաները ու բեյերը արգելակում էին ոչ միայն իրենց գյուղացիների, այլև բատրակության եկած մարարաների տեղափոխումները։ Այսպես, 1912 թ. Զարսանջակից երկու մարարաներ գնում և վարձվում են Խարբուիլյան Հարությունի մոտ, որի կալվածքը տեղավորված էր Խարբերդից 3 ժամվա հեռավորության վրա գտնվող Ենձոր գյուղում։ Նրանք մնում են վեց ամիս։ «Սակայն չափազանց դժգոհ մնալով Խարբուիլյանի առաջարկներեն ու նորանոր պայմաններեն, կձգեն գյուղը և կհեռանան... Խարբուիլյան լսելով, որ պիտի փախչին, իր գործակատար Մուհամմեդը անոնց դեմը կդրկե, որ արգիլե»։ Գործակատարը կատարում է Խարբուիլյանի հանձնարարությունը, բռնում է մարարաներին ճանապարհին, առաջարկում ետ վերադառնալ, երբ չեն հնազանդվում, կրակում է նրանց վրա և մեկին սպանում[24]։

Ըստ երևույթին բատրակ-մարարաների ճորտացումը աղաների ու բեյերի կողմից տարածված երևույթ էր Խարբերդի դաշտում։ Ա. Մ. Կոլյուբակինը տակավին 1880-ական թթ. կեսերին գրում էր, թե Խարբերդի կազայում մարաբան մոտ է «ճորտական կախվածության, իսկ բստ էության գտնվում է անգամ անհամեմատ ավելի վատ վիճակում»[25]։

Արևմտյան Հայաստանում աղաները ու բեյերը ճորտական կախվածության մեջ էին դրել ոչ միայն հայ, այլև քուրդ գյուղացիներին։ Այսպես, Ռ. Ի. Տերմենը գրում էր, որ Հեքյարում քրդերի «ինքնակամ անցումը մեկ աշիրեթից մյուսը արգելվում է»[26]։

Համարյա նույն բանն էր հաստատում նաև Վ. Գորդլևսկին. նա հիշատակում էր, որ մարխուրիների մոտ, որոնք ապրում էին Սիփհան-դաղի շրջակայքում, քուրդը առանց ցեղապետի թույլտվության «ոչ մի տեղ չի գնում»[27]։

Ուշագրավ է, որ գյուղացիների ազատ տեղափոխումների արգելակումը իր արտահայտությունն է գտել նաև գեղարվեստական գրականության մեջ։ Վ. Փափազյանի «Արազայի դաշտում» պատմվածքի մեջ Օմար աղան ցեղապետերից մեկի հետ զրուցելիս ասում է. «իմ հողիցն էլ 10—15 տնվոր փախել են.

---

22 Նույն տեղում, 1903, № 2, էջ 22։

23 Գ. Երևանյան, Պատմություն Զարսանճագի հայոց, Պեյրութ, 1956, էջ 209։

24 «Բյուզանդիոն», 1912, սեպտեմբերի 14։

25 А. М. Колюбакин, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Тифлис, 1891, т. III, ч. I, отд. 2, 4, էջ 385։

26 Р. И. Термен, Отчет о поездке в санджак Хеккиари Ванского вилайета в 1906 г., Тифлис, 1910, էջ 132։

27 „Мусульманский мир", Петроград, 1917, вып. 1, էջ 33։

ուշ իմացա, թե չէ՝ ով կթողներ, եղի՞ն էլ կթողնեն, որ աշխատանքից փախչի»[28]։

Աղաներն ու բեյերը, ամրացնելով գյուղացիներին հողին, ստիպում էին նրանց կատարել աշխատավճարային ռենտա։ Նրանք տալիս էին գյուղացիներին բաժնեհող՝ իբրև աշխատավարձ և դրա դիմաց առաջարկում էին անդարիա կամ օլամ անել, այսինքն՝ կոռ կատարել։ Հիշտ է, ինչպես Թուրքիայի այլ շրջաններում, նույնպես և Արևմտյան Հայաստանում անգարիան ու օլամը պաշտոնապես հայտարարվեցին վերացված տակավին XIX դարի 30-ական թվականներին, բայց իրականում դրանք շարունակում էին կիրառվել ոչ միայն նույն դարի վերջին քառորդում, այլև XX դարի սկզբին։ Այսպես, Շատախում աղաները բացի զանազան մթերքներից, վերցնում էին նաև. Ծիծանց գյուղից՝ 102, Կաղպի գյուղից՝ 100, Հաճնտից՝ 200, Հիննենցից՝ 20, իսկ Հիդի գյուղից՝ 120 սարակ, այսինքն՝ մշակ, աշխատող[29]։

Սասունի Պերմ գյուղում Քեռ Սրլոյի ծառաները, ականատեսներից մեկի վկայությամբ, տանում էին «հայերու մեծ ու փոքրին դեպի Քեռի ընդարձակ կալվածները։ Հայը պետք է նախ աղայի վար ու ցանքը ընե, հետո անոր բազմաթիվ բարեկամներու, աղդականներու և խոլամներու, և անկե վերջը միայն հայն իրավունք ունի իրեն համար աշխատելու։ Հայն է, որ քյուրդերու վարուցանքն ընելե հետո, պետք է ջրե արտերը, հերկե, մաքրե և գոյացած ցորեն կամ ուրիշ հացահատիկներ տանի քյուրդի ամբարները։ Հայերը պարտավոր են Քեռի անհամար ոչխար-տավարների համար խոտ բաղել, չորցնել, տերև կտրել, չորցնել և դիղել։ Քեռ Սրլոն ամեն տարի, ձմեռը, իր ոչխարների մեծ մասը կհանձնե հայերուն պահելու, եթե մեկ ոչխար սատկի, պետք է հայը վճարե»[30]։

Վարդոյի դավառի Պազքան գյուղում Մրահեն աղան իր դուլամներով տանում էր հայ գյուղացիներին օլամ անելու։ Ականատեսներից մեկը գրում էր, թե այդ «դեղեն հեռու բանակի մը պես բազմություն մը կերթար և անոնց առջևեն 10, 12 ձիավոր տիգավոր քրդեր, այն բանականման բազմությունը Պազքանա հայերն էին, դերանդին իրենց ուսերուն վրա, իրենց հաց իրենց քամակն առած, և ձիավորները քուրդ Մրահեն էր ու իր մարդեր, որ դ'հայեր կտանեին օլամով խոտ քաղել տալու, երեք օր այնպես բանեցուցած էր, ու առավոտ երեկո ալ ինքն և իր մարթեր իրենց ձիերով հայոց տուներ կիջնեին կուտեին»[31]։

Արճեշի դավառի Սոսկուն գյուղում Դարվիշ աղան, ինչպես նշում էր Ա-ղոն. «ձմեռվա սառնամանիքներին ստիպում էր Սոսկունի հայերին հերթով, խումբ-խումբ գնալ երկու ժամ հեռավորության վրա գտնվող Գոգն գյուղը, ուր գտնվում էր Դարվիշ աղայի խոտը և այնտեղից շալակով խոտ բերել Սոսկուն՝ ոչխարը կերակրելու համար. այս աշխատանքը շարունակվում էր ամբողջ ձմեռը։ Աղային հոգ չէր, որ ձմեռվա սառնամանիքներին ձյունով բռնված ճանապարհներով ահագին շալակած խոտը երկու ժամ ճանապարհ տանելը նույնիսկ գրաստի ուժերից վեր էր»[32]։

Արաղայի դաշտում հայ գյուղացիները իրենց տիրակալ Կոփ Մամադ բեկի հրամանով «գնում էին Թանդուրեքի լեռների շնգլները և այնտեղից շալակով

28 Վ. Փափազյան, Երկեր, հատ. 3, էջ 385։
29 «Մասիս», 1872, նոյեմբերի 9։
30 «Գրոշակ», 1903, № 2, էջ 21։
31 «Գիվան հայոց պատմության», հատ. 13, էջ 91։
32 Ա-դ ո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 321։

ցախ էին կրում Մակու՝ Զարանի գյուղը, ուր ապրում էր հիշյալ բարբարոսը, այդպես բնանվերված կտրելով 40—45 վերստ մի հսկա տարածություն»[33]։

Արևմտյան Հայաստանում աշխատավճարային ռենտայի առանձնահատկություններից մեկը կայանում էր նրանում, որ այն հաճախ միահյուսվում էր ֆեոդալական հարկի հետ։ Դրա կոնկրետ արտահայտություններից մեկը ղշլաղությունն էր։ Աղաները ու բեյերը երկրի որոշ շրջաններում իրենց ընտանիքներով, դինակիցներով ու անասուններով իջնում էին սարերից ու ձմեռում հրպատակ գյուղացիների տներում։ Նրանք ստիպում էին գյուղացիներին թոնիր վառել, հաց թխել, ջուր բերել և կերակրել իրենց ու իրենց անասուններին։ Ասիշտ է, թուրքական կառավարությունը տակավին 1830-ական թվականներին նույնպես պաշտոնապես վերացրել էր ղշլաղությունը, բայց քրդական կիսաբոշվոր ու քոչվոր ավազակին չէր հրաժարվում դրանից։ 1909 թ. թղթակից Հեղամը գրում էր, որ վրանարնակ քրդերից «շատերը աշնան ատեն իրենց վրաններով, տավարի, ոչխարի հոտերով, ընտանիքով ու ծառաներով հայ գեղերը կխուժեին, հայոց տները կտեղավորվեին ու կձմեռեին։ Այս բռնի և անտանելի բնակակցությունը դրշլաք կկոչվեր»[34]։

Աշխատավճարային ռենտայի առանձնահատկություններից մյուսն այն էր, որ պետության կողմից չկային որոշակի սահմանված օրեր գյուղացիական տարապարհակների համար։ Աղաները գյուղացիներին աշխատեցնում էին տարվա ցանկացած եղանակին և ցանկացած չափով։ Ֆաֆֆին գրում էր, որ Արևմտյան Հայաստանում «Աղայի հարաբերությունները և նրա պայմանները, հողի մշակության մասին, ռայայի (հպատակի) հետ, ամեն տեղ միակերպ չէին։ Յուրաքանչյուր գյուղ ուներ իր առանձին օրենքները և պայմանները»[35]։

Աղաները ու բեյերը, բացի տնտեսական հարստահարումից ու շահագործումից, Արևմտյան Հայաստանի գյուղացիների նկատմամբ ունեին նաև անձնական ու վարչադատական լայն իրավունքներ։

Ֆեոդալը, հատկապես քուրդ ֆեոդալը, հանդես էր գալիս որպես հողատեր, ռազմական առաջնորդ, պետական պաշտոնյա, վաշխառու, առևտրական և հողեր պետ։ Ի տարբերություն եվրոպական մի շարք երկրների, որտեղ հողեր իշխանությունը բաժանված էր աշխարհիկ իշխանությունից և կենտրոնացված կաթոլիկ եկեղեցու ձեռքում, Արևմտյան Հայաստանի քրդաբնակ վայրերում այդ բաժանումը չկար։ Ցեղապետի ձեռքում էր գտնվում ինչպես աշխարհիկ, նույնպես և հոգևոր-իշխանությունը։ Այդ ամենը, իհարկե, ավելի էր ուժեղացնում մի կողմից քրդական ֆեոդալի իշխանությունը, իսկ մյուս կողմից՝ աշխատավոր գյուղացիության տնտեսական հարստահարումն ու քաղաքական իրավազրկումը։

Աղաները ու բեյերը գյուղացիներին վաճառում ու գնում էին։ Երկրի մի շարք շրջաններում նրանք, ինչպես արդեն ասվեց, գյուղացիներին վաճառում էին հողի հետ միասին։ Հին տիրոջ փոխարեն գալիս էր նորը, որը գյուղացիների հետ վարվում էր ըստ իր քմահաճույքի. ում ցանկանում էր՝ թողնում էր, իսկ ում չէր ցանկանում՝ արտաքսում էր իր հողից։ Բայց երկրի այլ շրջաններում աղաները վաճառում էին իրենց ճորտերին առանց հողի։ Այսպես. ժամա-

33 Նույն տեղում, էջ 339։
34 «Ազատամարտ», 1909, № 47։
35 Ֆ ա ֆ ֆ ի, Երկեր, հատ. 4, էջ 386։

նակակիցներից մեկը նշում էր, որ Սասունում «հայը մեկ քրդեն մյուս քուրդին կվաճառվին»[36]։ Իսկ մյուսը գրում էր, որ Հազզոյում «տեսա Մահտեսի Վտանանվամբ հայ մեկը, որ մի քյուրդե ուրիշ քյուրդի մը կվաճառվեր։ Նորա արժեքը եղած էր (45) քառասուն և հինգ ոսկվա, և որո համար մունետիկ մրն ալ կշրջեր հրապարակը՝ նորա արժեքը հարցնող քյուրդերու հաղորդել և արժեքը բարձրացնող քյուրդ բեյեր գտնելու համար... աստ հայերն իրրև դերի կվաճառվին քուրդ աշիրեթի պեյերուն»[37]։

Վանի ռուսական փոխ-հյուպատոսը հաղորդում էր, որ Վասպուրականի որոշ շրջաններում ցեղապետերը «վաճառում են իրենց խաֆիրներին (այսինքն խաֆիրատու գյուղացիներին — Ա. Հ.), հենց որ փողի կարիք են զգում»[38]։

Ն. Ա. Լենսկին նշում էր, որ Արևմտյան Հայաստանի լեռնային մի շարք շրջաններում «գյուղացիները գնվում ու վաճառվում են որպես ապրանք»[39]։

Քրդական ցեղապետերի կողմից հայ և քուրդ գյուղացիների առք ու վաճառքի մասին հաղորդում էին նաև մի շարք այլ հեղինակներ[40]։

Աղաները ու բեյերը, բացի առք ու վաճառքից, խառնվում էին գյուղացիների անձնական գործերին, օգտվում էին առաջին գիշերվա իրավունքից, ծաղր ու ծանակի էին ենթարկում նրանց։ Ահա փաստեր. 1882 թ. «Արձագանք»-ի թղթակիցը հաղորդում էր, որ Խիզանում, Մոտկանում և Շատախում աղան «սեփականատեր է ոչ թե միայն հայի հողի, նրա ունեցածի վրա, այլև նրա հոգևոր կյանքի, նորա անձի վրա։ Հայի աշխատանքը, կենդանիները, տուն ու տեղը քյուրգերինն է, հայ տղան, թե աղջիկը իրավունք չունին պսակվիլ, առանց քյուրդ բեյի թույլտվության, եթե ոչ տուգանքի են ենթարկվում, առանց նույն բեյի թույլտվության հայը ոչ իրավունք ունի յուր երեխան մկրտել, ոչ էլ յուր ննջեցյալին թաղել»[41]։

Մոտկանի գյուղացիներից մեկը 1881 թ. պատմում էր. «7—8 տարի առաջ աղջիկ մը ունեի, հայ երիտասարդի հետ նշանեցի, տերոջս հրամանը չհարցնելով, նշանն ալ օրհնել տվի, վերջը տերս լսեց, սաստիկ բարկությամբ գյուղ եկավ՝ ինձ նեղություններ տալե վերջը՝ ի պատիժ իմ հանդուգն ձեռնարկության տաս հատ ոսկի, քանի մը հատ ոչխար, 3—4 զույգ նոր կոշիկ և այլն տուգանք առնելով՝ նույն նշանն ալ քակեց և աղջիկս ուրիշի մը տալ տվավ»[42]։

1898 թ. «Մշակ»-ի թղթակիցը հաղորդում էր, որ Բուլանրխի Յոնչալու գյուղում Բողար աղայի որդին «նորապսակ հարսի առագաստը... կմտնե և ամենաչքնաղ կույսերին անմեղությունը կառնակե»[43]։

Համարյա նույն բանն էր հաստատում նաև Ռ. Բ. Տերմենը, որը գրում էր, թե Մանազկերտում «ինձ հաղորդեցին, որ քուրդ ցեղապետ Ֆաթեխ բեյը ունի

---

36 «Մասիս», 1881, 10-ը նոյեմբերի։

37 «Արձագանք», 1883, № 41, էջ 583։

38 Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ. ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», 1901, գ. 1587, թ. 15։

39 Н. А. Ленский, О правовом положении землевладения в Турецкой Армении Петроград, 1916. էջ 17։

40 Տե՛ս Х. Ф. Б. Линч, Армения, т. II. էջ 544։ ՌԱԲԱ, ֆ. «Տաճարխիվ», 1889—1894 թթ., գ. 1630, թ. 234։ «Ազատամարտ», 1909, № 171։ «Մշակ», 1890, № 64։

41 «Արձագանք», 1882, № 3, էջ 38։

42 «Մասիս», 1881, 5-ը նոյեմբերի։

43 «Մշակ», 1898, № 80։

առաջին գիշերվա իրավունքը ամուսնացող բոլոր այն գեղեցիկ հայուհիների նկատմամբ, որոնք ապրում են նրա իշխանության տակ գտնվող գյուղերում»[44]։

Աղաներն ու բեյերը անարգում էին իրենց ճորտ գյուղացիների պատիվը նաև Մշո դաշտում։ Ականատեսներից մեկը պատմում էր, որ Գոնդեմիր գյուղում բեյերը «թմբուկ զարնել կուտան, ու իրենք նստած հրապարակի մեջ կրհրամայեն գեղի ամեն աղջիկ, հարս ու կնիկ դան պար խաղան, որին որ հավնին, գիշերը իրենց քով պետք է երթան»[45]։

Բացի այդ ամենից աղաները ծեծում ու սպանում էին իրենց ճորտերին հաճախ առանց որևէ մեկի առաջ պատասխան տալու։ Ռ. Ի. Տերմենը գրում էր, որ գյուղացու ամենափոքր ընդդիմության դեպքում ցեղապետը սպանում է նրան, «իսկ կառավարությունը դրա դեմ վճռականապես ոչինչ չի ձեռնարկում»[46]։

Նույն բանն էր հաստատում նաև Ռեզամ Տեր-Կարապետյանը, երբ նշում էր, թե բեյերը «ինքնակոչ իշխաններ են իրենց ռայաներու բոլոր դասակարգին չեն բավականանար կեղեքելով, թալանելով՝ այլև իրրև ստրուկներ կաշխատեցնեն տարապարհակ, որքան որ ուզեն, և երբեմն սպանելով իսկ զանոնք»[47]։

Աղաների ու բեյերի կողմից գյուղացիների նկատմամբ գործադրած բռնություններն ու անարգումները իրենց արտահայտությունն են գտել նաև գեղարվեստական գրականության մեջ[48]։

Ինչ վերաբերում է դատավարություններին, նախ՝ պետք է նշել, որ քրդական ցեղապետերը պապենական սովորության համաձայն հենց իրենք էին կատարում իրենց ցեղակիցների դատն ու դատաստանը։ 1890 թ. Վ. Փափազյանը գրում էր, որ Վասպուրականում ցեղապետի ձեռքում է գտնվում դատավարությունը, «ինչպես ուզի՝ կանե և ոչ ոք կարող է նրա դեմ խոսել»[49]։

Երկրորդ՝ թուրքական իշխանությունները Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններում դատավորներ էին նշանակում հենց իրենց՝ հողատերերին։ Այսպես, Հյուսեին բեկը կառավարության կողմից նշանակված էր Մանազկերտի Ակներ գյուղում դատավոր։ Ժամանակակիցներից մեկը 1913 թ. գրում էր, թե «Ակների հայերն են անոր գերիները, որոնց հողերը հետզհետե բռնագրված է ու գրավելու վրա է»[50]։

Երրորդ՝ թուրքական դատավորներն ու դատաբանները համարյա ամբողջապես գտնվում էին աղաների ազդեցության տակ, շարժվում ու գործում էին նրանց թելադրանքով։ 1880-ական թթ. Ա. Մ. Կոլյուբակինը գրում էր, որ Զարսանջակում և Բալուում իրերի իսկական տերերը ոչ թե կայմակամն ու կադին են, այլ «10—15 քրդական բեկեր»[51]։

1914 թ. թղթակից Մտրակը նշում էր, որ երբ աղաները «կառավարության որևէ պաշտոնատունն էին մտնում, կայմակամից սկսած մինչև դատավորները

---

[44] Р. И. Термен, Отчет о полевой поездке 1907 года в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах, Тифлис, 1909, էջ 56։

[45] «Դիվան հայոց պատմության», հատ. 13, էջ 106։

[46] Ռ. Ի. Տերմեն, նշվ. աշխ., էջ 53։

[47] Ռ. Տեր-Կարապետյան, Հողային հարցը հայաբնակ նահանգներու մեջ, Կ. Պոլիս, 1911, էջ 68։

[48] Տե՛ս Վ. Փափազյանի «Թեթև հանույթ» պատմվածքը (Երկեր, հատ. 2, էջ 439—445)։

[49] «Մշակ», 1890, № 45։

[50] «Հորիզոն», 1913, № 174։

[51] А. М. Колюбакин, նշվ. աշխ., էջ 214—215։

ոտի էին կանգնում և իրենց աթոռները նրանց էին տալիս, իրանք կամ նրանցից ցածր էին նստում և կամ ոտքի վրա մնում»[52]։

Նույն թվականին Վարդոյի գավառի Պագրան գյուղի բնակիչները դանդատվում էին, որ տեղի դատավորն ու նրա օգնականը գործում են իրենց շահագործող ու հարստահարող Ահմեդ աղայի թելադրանքով, «այդ պատճառով մեր իրավունքները չեն հարգվիր և մեր բողոք անլսելի կմնա»[53]։

Կարելի է բերել նաև բազմաթիվ այլ փաստեր XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանի գյուղացիության ճորտական կախվածության վերաբերյալ։ Բայց սահմանափակվենք այսքանով։

Մենք չունենք վիճակագրական տվյալներ պարզելու համար այն հարցը, թե ճորտ գյուղացիները Արևմտյան Հայաստանի գյուղացիության ո՞ր մասն էին կազմում (և հազիվ թե որևէ մեկն ունենա այդպիսի տվյալներ, քանի որ թուրքական կառավարությունը, որքանով մեզ հայտնի է, այդ ուղղությամբ որևէ աշխատանք չի կատարել), բայց աղբյուրներին մոտիկից ծանոթանալը հիմք է տալիս ենթադրելու, որ ճորտերը կախյալներից կամ կիսաճորտերից քանակապես քիչ էին։

1908 թ. հեղափոխությունից հետո երիտասարդ թուրքերը վերացված հայտարարեցին Աբդուլ-Համիդի այն օրենքները, որոնք արգելակում էին գյուղացիների տեղափոխումները մեկ գյուղից մյուսը կամ գյուղից քաղաք։ Ժամանակակիցները նշում էին, թե սահմանադրությունը հայերի համար միայն «այն բարիքն է արտադրել, որ այժմ ազատ և անարգել երթևեկություն կա քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ»[54]։

Սակայն երիտասարդ թուրքերը Արևմտյան Հայաստանում չվերացրին ճորտատիրությունը։ Գյուղացիները սահմանադրությունից անմիջապես հետո պահանջեցին աղաներից հող և ազատություն։ Բայց աղաները օգտվելով երիտասարդ թուրքերի հովանավորությունից, մեծ մասամբ նրանց մերժեցին, իսկ որոշ դեպքերում էլ արտաքսեցին իրենց հողերից և փոխարենը բերեցին ուրիշներին։ Ուշագրավ է, որ արտաքսված ճորտերը կամ արտագաղթում էին, կամ, չգտնելով ուրիշ ելք, երբեմն ստիպված էին լինում դիմել նախկին տերերին՝ նորից նրանց մոտ ապրելու համար։ Եվ աղաները, օգտագործելով այդ առիթը, ավելի ամբարտավան էին պահում իրենց նրանց նկատմամբ։ Այդպես վարվեց, օրինակ, Սեիդ-Ալին։ Երբ Խիզանի մի խումբ հայեր 1912 թ. դիմեցին նրան, նա պատասխանեց. «Դուք ռայաներ եք, իսկ մենք տիրողներ, ուստի դուք պարտավոր եք ըստ առաջնույն նորեն ձեր տերերու գլուպարան տալ, անոնց անկարելյա բլել ու կապալը վճարել. այն որ քյուրտին պարտք ունի և իր հողը գրավ է անոր մոտ, անոր գլխավճարը կամ տարեկան տոկոսը վճարելու է. ես այսչափ վճարած եմ ըսելով վճարումը մերժել չըլլար, սահմանադրություն, հյուրիյեթ է ըսելով ձեր այսչափ տարիներու պարտականություններեն ետ մնալը ներելի չէ»[55]։

Երիտասարդ թուրքերը, օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի առիթից, տեղահան արեցին հայ ազգաբնակչությանը և ենթարկեցին նրան

52 «Մշակ», 1914, № 125։
53 «Ազատամարտ», 1914, № 1535։
54 «Մշակ», 1911, № 188։
55 «Բյուզանդիոն», 1912, № 4871։

ֆիզիկական բնաջնջման։ Իսկ աղաներից ու բեյերից շատերը գործիք դարձած նրանց ձեռքին, ակտիվ մասնակցություն ունեցան այդ հրեշավոր սճրագործություններ։

О КРЕПОСТНИЧЕСКОЙ ЗАВИСИМОСТИ КРЕСТЬЯНСТВА В ЗАПАДНОЙ АРМЕНИИ В ПОСЛЕДНЕЙ ЧЕТВЕРТИ XIX И НАЧАЛЕ XX ВЕКОВ

А. С. АМБАРЯН

(Резюме)

Крепостничество является одной из форм феодальной зависимости крестьянства. Оно сложилось в Западной Армении еще в средние века и продолжало существовать в XIX веке. Правда, в 30—40 годах XIX столетия военно-ленное землевладение было заменено помещичьим землевладением, многие деревни были уничтожены, но крепостничество все же не было ликвидировано. Наоборот, после русско-турецкой войны 1877—1878 гг., в силу национально-аграрной политики султана Абдула-Гамида и слабого развития товарно-денежных отношений, оно получило в Западной Армении значительное развитие. Крепостничество не было упразднено в Западной Армении и буржуазной революцией в Турции 1908 года.

Как в средние века, так и в XIX в. крепостничество в Западной Армении, по сравнению, например, с рядом районов России, имело свои особенности. Если в России крепостные были прикреплены к личности помещика, то в Западной Армении — к данной местности или деревне. Эта особенность вытекала, с одной стороны, из характера военно-ленного землевладения, а с другой—из принципов шариата, запрещавших личную зависимость крестьянства. Кроме того, крепостничество в Западной Армении выражалось в более жестоких формах, так как здесь социальное угнетение крестьянства переплеталось с его национально-религиозным угнетением.